

Բանկային հաշվի բացման և սպասարկման ամփոփագիր

1. Հաշվի բացման և փակման ժամկետները սահմանված են "Ամերիաբանկ" ՓԲԸ "բանկային ծառայությունների մատուցման" ընթացակարգերում:
2. Բանկային հաշիվները բացվում են ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով, եվրոյով, ՌԴ ռուբլով, շվեյցարական ֆրանկով, անգլիական ֆունտ ստերլինգով, կանադական դոլարով, ճապոնական իենայով, ավստրալիական դոլարով, ՄԱԷ դիրհամով, անկանխիկ ոսկով /999,9 հարգի/:
3. Բանկը՝ պայմաններով սահմանված կարգով և իր ներքին ակտերին համապատասխան, իրականացնում է հաշվի համալիր սպասարկումը և հաճախորդի հանձնարարությամբ այն բոլոր հաշվարկա-դրամարկղային գործառնությունները, որոնք արգելված չեն ՀՀ օրենսդրությամբ: Բանկային հաշվով իրականացվող ուղղակի գործառնություններից են հաշվարկադրամարկղային գործառնությունները, մասնավորապես՝ դրամական միջոցների կանխիկ մուտք/ելքը, փոխանցումները, արտարժույթի փոխարկումները, ինչպես նաև Բանկի և հաճախորդի փոխադարձ համաձայնությամբ իրականացվող օրենքով չարգելված այլ գործառնություններ, բացառությամբ ոսկով առարկայագուրկ մետաղական հաշիվների, որոնցով իրականացվում են հետևյալ տեսակի գործառնությունները՝
 - 3.1. Մետաղական հաշվին անկանխիկ ոսկու մուտքագրումն /համալրում/ իրականացվում է Բանկից անկանխիկ ոսկի գնելով կամ երրորդ անձանց/հաճախորդի այլ առարկայագուրկ մետաղական հաշվից անկանխիկ փոխանցման միջոցով: Մուտքագրումն իրականացվում է հաճախորդի կողմից հանձնարարական ներկայացնելու օրվա դրությամբ՝ Բանկի կողմից սահմանված գնանշման համաձայն:
 - 3.2. Մետաղական հաշվից անկանխիկ ոսկու ելքագրումն իրականացվում է մետաղական հաշվում առկա ոսկին Բանկին վաճառելու միջոցով: Ելքագրումն իրականացվում է հաճախորդի այլ կամ երրորդ անձանց ոսկու հաշիվներին փոխանցում կատարելու կամ հանձնարարական ներկայացնելու օրվա դրությամբ՝ Բանկի կողմից սահմանված գնանշման համաձայն:
 - 3.3. Ոսկու անկանխիկ առք և վաճառքն իրականացվում է հաճախորդի գործարքի էական պայմաններ (գինը, կատարման ժամկետը և կշիռը) պարունակող հայտի հիման վրա,
 - 3.4. Հաշվից անակցեպտ գանձումներն իրականացվում են ի կատարումն Բանկի կամ երրորդ անձանց նկատմամբ հաճախորդի պարտավորությունների:
4. Բանկի պայմաններով նախատեսված հաշվարկային և դրամարկղային գործառնություններն իրականացվում են հաշվի/ների/ մնացորդի սահմաններում՝ հաշվի առնելով բանկի սակագներով սահմանված միջնորդավճարների գումարները: Հաշվի նվազագույն մնացորդը և բանկային հաշվով իրականացվող գործառնությունների սահմանափակումները ներկայացված են ստորև և արտացոլված են Բանկի ՄԱԿԱԳՆԵՐՈՒՄ:
5. Բանկային հաշիվների մնացորդների նկատմամբ Բանկը տոկոսներ չի վճարում:
6. Բանկային ծառայություններից օգտվելիս ՀՀ դրամով բանկային հաշիվ բացելը պարտադիր է:

7. Բանկային հաշվի վարման/պահպանման համար բանկը գանձում է միջնորդավճար՝ ըստ հետևյալի.

| Հաշվի վարում ¹ | |
|--|--|
| 1.1. Ռեզիդենտ իրավաբանական անձանց համար | |
| 1.1.1. Օրացուցային կիսամյակի ընթացքում հաճախորդի հաշիվներով նվազագույնը 300,000 ՀՀ դրամին համարժեք շրջանառության առկայության կամ հաշվի միջին օրական մնացորդը 100,000 ՀՀ դրամը գերազանցելու դեպքում | անվճար |
| 1.1.2. Օրացուցային կիսամյակի ընթացքում հաճախորդի որևէ հաշվով 300,000 ՀՀ դրամից փոքր շրջանառության կամ հաշվի միջին օրական մնացորդը 100,000 ՀՀ դրամից պակաս լինելու դեպքում | 10,000 ՀՀ դրամ յուրաքանչյուր օրացուցային կիսամյակի համար |
| 1.2. Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց համար ² | 25,000 ՀՀ դրամ ամսական |
| 1.3. Հաճախորդի դիմումի համաձայն հաճախորդի հաշիվների փակում | |
| 1.3.1. Հաշիվը բացելուց հետո մեկ տարվա ընթացքում (միաժամանակ մեկից ավելի հաշիվներ փակելու դեպքում գանձվում է մեկ հաշվի փակման համար նախատեսված միջնորդավճար) | 10,000 ՀՀ դրամ |
| 1.3.2. Հաշիվը բացելուց մեկ տարի հետո | անվճար |

8. Բանկային հաշիվներով գործառնությունները կատարվում են բանկային հաշվի արժույթով, բացառությամբ միջոցների փոխարկման գործառնությունների: Փոխանակումը կատարվում է այդ պահին Բանկի կողմից սահմանված փոխարժեքով: Բանկը յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար սահմանում է արտարժույթի առք և վաճառքի փոխարժեքներ, որոնք գործում են Բանկի աշխատանքային ժամերին:

¹ Հաճախորդի որևէ հաշվի շրջանառությունը (այդ թվում քարտային) տարածվում է հաճախորդի մնացած բոլոր հաշիվների վրա (այս դրույթը գործում է միայն միջնորդավճարի գանձման տեսանկյունից): Ընդ որում, եթե հաճախորդը ունի գործող քարտին կից քարտային հաշիվ միայն, ապա միջնորդավճարը չի գանձվում, իսկ փակված քարտին կից քարտային հաշվի դեպքում միջնորդավճարը գանձվում է: Միջնորդավճարը գանձվում է յուրաքանչյուր օրացուցային կիսամյակին հաջորդող երկու շաբաթվա ընթացքում:

Նախորդ 12 ամիսների ընթացքում բոլոր հաշիվներով շրջանառության բացակայության դեպքում հաճախորդի հաշվով դեբետագրումը սահմանափակվում է յուրաքանչյուր օրացուցային եռամսյակին հաջորդող երկու շաբաթվա ընթացքում: Նախորդ 12 ամիսների ընթացքում հաճախորդի բոլոր հաշիվներով շրջանառության բացակայության և մնացորդների զրոյական լինելու դեպքում հաճախորդի հաշիվները փակվում են յուրաքանչյուր օրացուցային կիսամյակին հաջորդող երկու շաբաթվա ընթացքում:

² Հաճախորդի հետ երկկողմանի համաձայնագի հիմքով հաճախորդից կարող է գանձվել սահմանված միջնորդավճարից տարբեր վճարներ:

Հեռակառավարման համակարգերով հաճախորդների սպասարկման ընթացքում աշխատանքային ժամերից դուրս (մինչև ժամը 09:30 և ժամը 17:00-ից հետո), նաև ոչ աշխատանքային օրերին (այդ թվում նաև շաբաթ օրերին) ստացված արտարժույթի փոխանակման հայտերը Բանկի կողմից կարող են մերժվել:

9. Էլեկտրոնային միջոցներով հաշվում եղած դրամական միջոցների տնօրինման հնարավորությունները և սակագները.

| 2. Հաշվի հեռակա սպասարկման վճարներ ³ | |
|--|---|
| 2.1. Բանկ-Հաճախորդ համակարգով | 10,000 ՀՀ դրամ ամսական (գանձումը իրականացվում է եռամսյակային կտրվածքով, օրացուցային եռամսյակին հաջորդող ամսվա առաջին շաբաթվա ընթացքում) |
| 2.2. Ինտերնետ-Բանկինգ/Մոբայլ-Բանկինգ համակարգով | |
| 2.2.1. Հաշիվների քաղվածքներ և գործարքներ դիտելու իրավունքով | անվճար |
| 2.2.2. Մինչև 2 օգտագործող գրանցելու դեպքում | |
| 2.2.2.1. Գործարքներ հաստատելու համար մեկանգամյա ծածկագիր գեներացնող սարքերից որևէ երկուսը կամ Ամերիա Թոքեն ծրագրային ապահովման երկու կողմ ⁴ | Տարեկան 20,000 կամ ամսական 2,000 ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ |
| 2.2.3. Լրացուցիչ օգտագործող գրանցելու դեպքում (3-րդ օգտագործողից սկսած) | 1,000 ՀՀ դրամ ամսական՝ ներառյալ համակարգ մուտքագրվելու և գործարքներ հաստատելու համար մեկանգամյա ծածկագիր գեներացնող սարքերից որևէ մեկը կամ Ամերիա Թոքեն ծրագրային ապահովման մեկ |

³ Բանկը յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար սահմանում է արտարժույթի առք և վաճառքի փոխարժեքներ, որոնք գործում են Բանկի աշխատանքային ժամերին: Հեռակառավարման համակարգերով հաճախորդների սպասարկման ընթացքում աշխատանքային ժամերից դուրս (մինչև ժամը 09:30 և ժամը 17:00-ից հետո), նաև ոչ աշխատանքային օրերին (այդ թվում նաև շաբաթ օրերին) ստացված արտարժույթի փոխանակման հայտերը Բանկի կողմից կարող են մերժվել:

⁴ Գանձումն իրականացվում է ամսական կտրվածքով, հաջորդող ամսվա առաջին շաբաթվա ընթացքում: Միջնորդավճարի հաշվարկը սկսվում է ծառայության տրամադրման հաջորդ ամսվանից սկսած մինչև ծառայության դադարեցման ամիսը ներառյալ: Մինչև 15.01.19թ-ը ներառյալ տվյալ ծառայությունից օգտվող հաճախորդների նկատմամբ միջնորդավճարը կիրառվելու է 2019 թվականի փետրվարի 1-ից սկսած՝ գանձման ամսական պարբերականությամբ: Հաճախորդը կարող է փոխել ծառայության դիմաց միջնորդավճարի գանձման պարբերականությունը ամսականից տարեկանի՝ դիմում ներկայացնելով Բանկ: Մինչ այդ վճարված միջնորդավճարները վերադարձման ենթակա չեն:

| | |
|--|-------------------------------|
| | կող՝ ըստ հաճախորդի ընտրության |
| 2.2.4. Ծածկագիր գներացնող սարքի տրամադրում (կորցնելու կամ վնասելու դեպքում), սարքի տեսակի փոխարինում | 3,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ |

10. Բանկային հաշվին կանխիկ միջոցները մուտքագրվում են գումարի ներկայացման պահին: Միաժամանակ 10 և ավելի կանխիկ մուտքի գործարք կատարելու դեպքում իրակաբանական անձանցից գանձվում է միջնորդավճար՝ 20 ՀՀ դրամ յուրաքանչյուր մուտքի համար:

11. Անկանխիկ արտարժույթի մուտքագրումը հաշվին կատարվում է անվճար: Քարտային հաշիվներին, ինչպես նաև ժամկետային ավանդ ներդնելիս կանխիկի մուտքագրումը կատարվում է անվճար:

12. Կանխիկի տրամադրման միջնորդավճար չի գանձվում հետևյալ միջոցների կանխիկացման դեպքերում.

- ✓ ժամկետային ավանդներից գոյացած միջոցների, այդ թվում տոկոսագումարների դեպքում (բացառությամբ ժամկետից շուտ մարվող ավանդների)
- ✓ խնայողական ավանդների տոկոսագումարների դեպքում
- ✓ պարտատոմսերի գումարների այդ թվում արժեկտրոնի վճարման դեպքում՝ մինչև պարտատոմսի մարման ժամկետը պարտատոմսը պահպանելու դեպքում

Բանկի կողմից վարկի տրամադրումից առաջացած գումարներից կիրառվում է նշված սակագինը, եթե տվյալ վարկատեսակի պայմաններով այլ սակագին չի սահմանվում:

Բանկի կողմից տեղադրված POS տերմինալի գործողությունները արտացոլող այդ նպատակով բացված հատուկ հաշվից ելքի դեպքում միջնորդավճար չի գանձվում:

14. Բանկային հաշվին անկանխիկ միջոցները մուտքագրվում են Բանկի թղթակից հաշվին գումարի մուտքագրման օրը:

15. Բանկը թղթային եղանակով և հեռակառավարման համակարգերով վճարման հանձնարարականները ընդունում և փոխանցում են համաձայն ստորև սահմանված սակագների և ժամանակացույցի

ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ⁵

| | Միջնորդավճար |
|---|---|
| 1. Փոխանցումներ ՀՀ դրամով | |
| 1.1. Ներբանկային | անվճար |
| 1.2. ՀՀ բանկեր ⁶ | անվճար |
| 1.2.1. Վճարման հանձնարարականը Բնակ-Հաճախորդ/Ինտերնետ-Բանկինգ/Մոբայլ-Բանկինգ համակարգերով ներկայացնելու դեպքում | անվճար |
| 1.2.2. Վճարման հանձնարարականը թղթային ներկայացնելու դեպքում՝ Երևան քաղաքում գտնվող Բանկի մասնաճյուղերում ⁷ | 200 ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ յուրաքանչյուր հանձնարարականի համար |

⁵Բանկը թղթային եղանակով և հեռակառավարման համակարգերով վճարման հանձնարարականները ընդունում և փոխանցում է համաձայն ստորև սահմանված ժամանակացույցի՝ հաճախորդի հաշվին փոխանցման ենթակա գումարի փաստացի առկայության պարագայում.

| | Թղթային եղանակով ներկայացվող վճարման հանձնարարականներ | | | | Բանկ-Հաճախորդ/Ինտերնետ-Բանկինգ/ Մոբայլ բանկինգ համակարգերով ներկայացվող վճարման հանձնարարականներ | | | |
|-----------------------|---|--------------------|--------------------|---------------------|--|--------------------|--------------------|---------------------|
| | Ընդունում | Փոխանցում | Ընդունում | Փոխանցում | Ընդունում | Փոխանցում | Ընդունում | Փոխանցում |
| ՀՀ դրամ | Մինչև ժամը 13:00 | Նույն բանկային օրը | Ժամը 13:00-ից հետո | Հաջորդ բանկային օրը | Մինչև ժամը 14:00 | Նույն բանկային օրը | Ժամը 14:00-ից հետո | Հաջորդ բանկային օրը |
| ԱՄՆ դոլար | Մինչև ժամը 16:00 | Նույն բանկային օրը | Ժամը 16:00-ից հետո | Հաջորդ բանկային օրը | Մինչև ժամը 17:00 | Նույն բանկային օրը | Ժամը 17:00-ից հետո | Հաջորդ բանկային օրը |
| Այլ արտարժույթ | Մինչև ժամը 15:00 | Նույն բանկային օրը | Ժամը 15:00-ից հետո | Հաջորդ բանկային օրը | Մինչև ժամը 16:00 | Նույն բանկային օրը | Ժամը 16:00-ից հետո | Հաջորդ բանկային օրը |

Քարտային հաշիվներից փոխանցումներ կատարելիս սակագների 4-րդ գլխով սահմանված փոխանցումների միջնորդավճարներին գումարվում են նաև քարտային հաշիվներից փոխանցումների համար սահմանված միջնորդավճարները (տե՛ս Քարտերի տրամադրման և սպասարկման պայմաններ)

⁶ Ժամը 13:00-ից մինչ 15:00-ը թղթային եղանակով ներկայացված 50 մլն դրամը չզերագանցող վճարման հանձնարարականների (14:00-ից մինչև 15:15-ը էլեկտրոնային վճարման հանձնարարականների դեպքում) հիման վրա նույն բանկային օրը փոխանցում կատարելու համար գանձվում է 10,000 ՀՀ դրամ միջնորդավճար՝ յուրաքանչյուր վճարման հանձնարականի համար:

⁷ 1.2.2, 1.4 և 2.7 կետերը ուժի մեջ է 01.03.2019թ-ից:

| | |
|---|--|
| 1.2.3. Վճարման հանձնարարականը թղթային ներկայացնելու դեպքում՝ Երևան քաղաքից դուրս գտնվող Բանկի մասնաճյուղերում | անվճար |
| 1.3. Վճարային հանձնարարականի ստեղծում Երևան քաղաքում գտնվող Բանկի մասնաճյուղերում՝ աշխատակցի կողմից | 500 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ յուրաքանչյուր փաստաթղթի համար |
| 1.4. Վճարային հանձնարարականի ստեղծում Երևան քաղաքից դուրս գտնվող Բանկի մասնաճյուղերում՝ աշխատակցի կողմից | 200 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ յուրաքանչյուր փաստաթղթի համար |
| 2. Փոխանցումներ արտարժույթով ⁸ | |
| 2.1. Ներբանկային | անվճար |
| 2.2. ՌԴ ռուբլով | , |
| 2.2.1. Թղթակից և բոլոր միջնորդ բանկերի ծախսերը գանձվում են փոխանցվող գումարից | 3,000 ՀՀ դրամ |
| 2.2.2. Թղթակից և բոլոր միջնորդ բանկերի ծախսերը կրում է բանկը | 0.1 %, Նվազագույնը՝ 3,000 ՀՀ դրամ, Առավելագույնը՝ 30,000 ՀՀ դրամ |
| 2.3. ԱՄՆ դոլարով, եվրոյով | |
| 2.3.1. Թղթակից և բոլոր միջնորդ բանկերի ծախսերը գանձվում են փոխանցվող գումարից | 0.1%, Նվազագույնը՝ 5,000 ՀՀ դրամ, Առավելագույնը՝ |

⁸ Այն դեպքում, երբ փոխանցվող գումարը կազմում է 3 մլն և ավել ԱՄՆ դոլար կամ համարժեք այլ արտարժույթ, փոխանցումները կատարվում են միայն 2.2, 2.3.2, 2.4.2 տարբերակներով՝ 1,000,000 ՀՀ դրամ միջնորդավճարով: Այլ բանկ/եր/ում առկա վարկային պարտավորությունները Բանկ տեղափոխելու շրջանակում ավտոմատ եղանակով կատարվող արտարժույթով փոխանցումները Բանկի կողմից իրականացվում են անվճար: Միջանկյան, կուրսայական բանկեր և դրանց մասնաճյուղեր հասցեագրվող փոխանցումները կատարվում են ծախսերի 2.3.1 և 2.4.1 կետերում նշված տարբերակներով:

| | |
|--|--|
| | 12,000 ՀՀ դրամ |
| 2.3.2. Թղթակից բանկի ծախսերը կրում է բանկը, իսկ առկայության դեպքում բոլոր միջնորդ բանկերի ծախսերը գանձվում են փոխանցվող գումարից | |
| 2.3.2.1. Վճարման հանձնարարականը թղթային ներկայացնելու դեպքում | 0.15%, Նվազագույնը՝ 7,500 ՀՀ դրամ, Առավելագույնը՝ 50,000 ՀՀ դրամ |
| 2.3.2.2. Վճարման հանձնարարականը Բանկ-Հաճախորդ/Ինտերնետ-Բանկինգ/Մոբայլ-Բանկինգ համակարգերով ներկայացնելու դեպքում | 0.1%, Նվազագույնը՝ 6,000 ՀՀ դրամ, Առավելագույնը՝ 50,000 ՀՀ դրամ |
| 2.3.3. Թղթակից և բոլոր միջնորդ բանկերի ծախսերը կրում է բանկը | 2.3.2 Կետով սահմանված միջնորդավճար + 10,000 ՀՀ դրամ |
| 2.4. Բանկի կողմից գնանշվող այլ արտարժույթներով | |
| 2.4.1. Թղթակից և բոլոր միջնորդ բանկերի ծախսերը գանձվում են փոխանցվող գումարից | 0.1%, Նվազագույնը՝ 5,000 ՀՀ դրամ, Առավելագույնը՝ 12,000 ՀՀ դրամ |
| 2.4.2. Թղթակից բանկի ծախսերը կրում է բանկը, իսկ առկայության դեպքում բոլոր միջնորդ բանկերի ծախսերը հետագայում փոխհատուցվում են հաճախորդին կողմից ⁹ | |
| 2.4.2.1. Վճարման հանձնարարականը թղթային ներկայացնելու դեպքում | 0.15%, Նվազագույնը՝ |

⁹ Ամերիաբանկի միջնորդ բանկերի կողմից ներկայացված ծախսերը ենթակա են փոխհատուցման հաճախորդի հաշվից:

| | |
|---|---|
| | 12,000 ՀՀ դրամ, Առավելագույնը՝ 50,000 ՀՀ դրամ |
| 2.4.2.2. Վճարման հանձնարարականը Բանկ- Հաճախորդ/Ինտերնետ-Բանկինգ/Մոբայլ- Բանկինգ համակարգերով ներկայացնելու դեպքում | 0.1%, Նվազագույնը՝ 10,000 ՀՀ դրամ, Առավելագույնը՝ 50,000 ՀՀ դրամ |
| 2.5. Բանկում չգնանշվող արժույթներով գումարի փոխանցում ¹⁰ | 0.2%, Նվազագույնը՝ 20,000 ՀՀ դրամ, Առավելագույնը՝ 100,000 ՀՀ դրամ |
| 2.6. Վճարային հանձնարարականի ստեղծում Երևան քաղաքում գտնվող Բանկի մասնաճյուղերում՝ աշխատակցի կողմից | 1,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ յուրաքանչյուր փաստաթղթի համար |
| 2.7. Վճարային հանձնարարականի ստեղծում Երևան քաղաքից դուրս գտնվող Բանկի մասնաճյուղերում՝ աշխատակցի կողմից | 500 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ յուրաքանչյուր փաստաթղթի համար |
| 3. Փոխանցումներ ոսկով (999.9) | |
| 3.1. Ներբանկային | անվճար |
| 3.2. ՀՀ այլ բանկեր և արտերկիր ¹⁵ | 20,000 ՀՀ դրամ (յուրաքանչյուր մուտքի և ելքի համար) |
| 4. Հաճախորդի դիմումի համաձայն վճարման հանձնարարականի տվյալների փոփոխում և չեղյալ համարում ¹¹ | |

¹⁰ Փոխանցումը կատարվում է ԱՄՆ դոլարով, իսկ ստացողի հաշվին մուտքագրվում է հաճախորդի նախընտրած արտարժույթով:

| | |
|---|----------------|
| 1.1. ՀՀ դրամ | 1,000 ՀՀ դրամ |
| 1.2. Արտարժույթ ¹² | 25,000 ՀՀ դրամ |
| 5. Ինտերնետ-Բանկինգ/Մոբայլ-Բանկինգ համակարգով հաճախորդի դիմումի համաձայն վճարման հանձնարարականի տվյալների փոփոխում և չեղյալ համարում ¹³ | |
| 5.1. ՀՀ դրամով վճարման դեպքում | 500 ՀՀ դրամ |
| 5.2. ՌԴ ռուբլով վճարման դեպքում | 10,000 ՀՀ դրամ |
| 5.3. Այլ արտարժույթով վճարման դեպքում | 25,000 ՀՀ դրամ |
| 6. Հաճախորդի կողմից թերի կամ սխալ ներկայացված տվյալների արդյունքում (ներառյալ շահառուի համապատասխան հաշիվը փակված լինելու դեպքում) վճարման հանձնարարականի հետ վերադարձ թղթակից բանկի կողմից | |
| 6.1. ՀՀ դրամ | անվճար |
| 6.2. ՌԴ ռուբլի | 25,000 ՀՀ դրամ |
| 6.2.1. Ինտերնետ-Բանկինգ/Մոբայլ Բանկինգ համակարգով ներկայացված հանձնարարականի դեպքում | 10,000 ՀՀ դրամ |
| 6.3. Արտարժույթ ¹⁵ | 25,000 ՀՀ դրամ |
| 7. Անկանխիկ արտարժույթի մուտքագրում հաշվին | անվճար |

16. Չեկերը ներկայացվում են վճարման հետևյալ ժամկետներում.

- չեկը, որը դուրս է գրվել Հայաստանի Հանրապետության տարածքում, պետք է Բանկին վճարման ներկայացվի չեկի դուրսգրմանը հաջորդող օրվանից սկսած 10 (տասը) օրվա ընթացքում,
- չեկը, որը դուրս է գրվել Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս, պետք է Բանկին վճարման ներկայացվի չեկի դուրսգրմանը հաջորդող օրվանից սկսած 30 (երեսուն) օրվա ընթացքում:

¹¹ Միջնորդավճարը չի գանձվում այն դեպքում, երբ հաճախորդի հաշվից փոխանցման գումարը չեղարկման հայտ ներկայացնելու պահին դեբետագրված չէ:

¹² Ի լրումն վերոնշյալ սակագնի՝ երրորդ կողմի ներկայացված ծախսերը նույնպես ենթակա են փոխհատուցման հաճախորդի կողմից:

¹³ Միջնորդավճարը չի գանձվում, եթե գումարը բանկից դուրս չի եկել:

19. Բանկային հաշվից տեղեկատվական նյութերը և քաղվածքները տրամադրվում են հետևյալ սակագներով.

| 3. Քաղվածքների, տեղեկատվական նյութերի և կրկնօրինակների տրամադրման միջնորդավճար | |
|---|--|
| 3.1. Մինչև 1 տարի վաղեմություն ունեցող քաղվածքի, քաղվածքի կրկնօրինակի կամ էլեկտրոնային ձևով պահվող այլ փաստաթղթի տրամադրում | անվճար |
| 3.2. 1 տարուց ավել վաղեմություն ունեցող քաղվածքի, քաղվածքի կրկնօրինակի տրամադրում կամ էլեկտրոնային ձևով պահվող այլ փաստաթղթի տրամադրում ¹⁴ | 5,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ յուրաքանչյուր հաշվի յուրաքանչյուր տարվա քաղվածքի համար |
| 3.3. Թղթային կամ 1 տարուց ավել վաղեմություն ունեցող էլեկտրոնային ձևով պահվող փաստաթղթի կրկնօրինակի տրամադրում | 5,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ յուրաքանչյուր փաստաթղթի համար |
| 3.4. SWIFT MT940 ֆորմատի քաղվածքների տրամադրում | 1,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ յուրաքանչյուր փաստաթղթի համար |
| 3.5. Տեղեկանքների տրամադրում | |
| 3.5.1. 3 ամիս և ավել հաշվետեր հաճախորդներին | 3,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ |
| 3.5.2. Մինչև 3 ամսվա հաճախորդներին | 5,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ |
| 3.5.3. Ինտերներ-Բանկինգ/Մոբայլ Բանկինգ համակարգով պատվիրելու դեպքում ¹⁵ | 1,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ |

¹⁴ Մեկ տարուց ավելի վաղեմություն ունեցող քաղվածքների, դրանց կրկնօրինակների և այլ նյութերի (այդ թվում՝ տեղեկանքների, փաստաթղթերի, դրանց կրկնօրինակների, աուդիտորական հարցման պատասխանների) տրամադրումն իրականացվում է պայմանագրային հիմունքներով: Միջնորդավճարը չի գանձվում Բանկի կողմից տեղադրված POS տերմինալի գործողություններն արտացոլող հաշվից քաղվածքի տրամադրման համար:

¹⁵ Տեղեկանքի հայտը պետք է ներկայացված լինի առնվազն մեկ բանկային օր առաջ:

| | |
|--|--|
| 3.6. Տեղեկանք-երաշխիքներ | 10,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ |
| 3.7. Աուդիտորական հարցման պատասխանների պատրաստում | 10,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ |
| 3.8. Քաղվածքի առաքում | |
| 3.8.1. Էլեկտրոնային փոստով | անվճար |
| 3.8.2. Փոստով՝ ՀՀ տարածքում | անվճար |
| 3.8.3. Փոստով՝ ՀՀ տարածքից դուրս ¹⁶ | Համաձայն փոստային ծառայության կողմից ներկայացված ծախսերի |
| 3.9. Հաշվի շրջանառության վերաբերյալ հեռախոսով տեղեկատվության տրամադրում | 10,000 ՀՀ դրամ տարեկան՝ ներառյալ ԱԱՀ |
| 6.1. Գործառնական SMS հաղորդագրություններ | |
| 6.1.1. հաշվի մնացորդ օրական պարբերականությամբ | 3,000 ՀՀ դրամ տարեկան ներառյալ ԱԱՀ |
| 6.1.2. հաշվի մնացորդ նվազագույնը շաբաթական պարբերականությամբ | 1,000 ՀՀ դրամ տարեկան ներառյալ ԱԱՀ |
| 6.1.3. հաշվով վերջին գործառնությունների վերաբերյալ համառոտ քաղվածք | 3,000 ՀՀ դրամ տարեկան ներառյալ ԱԱՀ |
| 6.2. Տեղեկատվական SMS հաղորդագրություններ | |
| 6.2.1. բանկի փոխարժեքներ յուրաքանչյուր փոփոխության դեպքում, 6.2.1.1. կանխիկ փոխարժեք, 6.2.1.2. անկանխիկ փոխարժեք | 10,000 ՀՀ դրամ տարեկան ներառյալ ԱԱՀ |
| 6.2.2. օրական կտրվածքով ՀՀ ԿԲ կողմից հրապարակվող արտաժողովային շուկայի միջին փոխարժեք | 3,000 ՀՀ դրամ տարեկան ներառյալ ԱԱՀ |

20. Հաշվում առկա դրամական միջոցները տնօրինելու հաճախորդի իրավունքը չի կարող սահմանափակվել, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվում առկա դրամական միջոցների նկատմամբ սահմանափակում կիրառելու (արգելադրելու), հաշվով գործառնությունները դադարեցնելու կամ Կողմերի միջև կնքված այլ պայմանագրով նախատեսված լինելու դեպքերում:

¹⁶ Առաքումը կատարվում է ռեգուլյար փոստի միջոցով:

- 21.** Առանց հաճախորդի կարգադրության՝ հաշվում եղած դրամական միջոցները թույլատրվում է դուրս գրել դատարանի վճռով, ինչպես նաև օրենքով և հաճախորդի հետ կնքված պայմանագրերով սահմանված դեպքերում:
- 22.** Հաճախորդների համար Բանկում սահմանված կարգով հաստատվում է հաշվով գործարք կատարելու իրավունք ունեցող ներկայացուցչի (ներկայացուցիչների) ստորագրության (ստորագրությունների) և հաճախորդի կնիքի (առկայության դեպքում) նմուշի քարտ:
- 23.** Բանկային հաշվի պայմաններից ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են Կողմերի փոխադարձ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 24.** Բանկային հաշվի լուծման պայմանները, ինչպես նաև լուծման դեպքում հաշվում առկա դրամական միջոցների մնացորդի նկատմամբ իրականացվող հետագա գործողությունները ներկայացված են Ամերիաբանկ» ՓԲԸ կողմից իրավաբանական անձանց (անհատ ձեռներեցներին) բանկային ծառայությունների մատուցման հիմնական պայմաններում:
- 25. Հայտարարություն.** Հաշիվը և դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու հաշվետիրոջ իրավունքները կարող են սահմանափակվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կամ հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման:
- 26. Հայտարարություն.** Հաշվետիրոջ դրամական միջոցների վրա թույլատրվում բռնագանձում տարածել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով դատարանի վճռի հիմքով՝ ԴԱՀԿ ծառայության որոշման համաձայն: Բանկը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով ընդունված դատարանի որոշումը կամ վճիռը ստանալու և բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները տրամադրելու Բանկի պարտավորության մասին Հաճախորդին ³ (երեք) բանկային օրվա ընթացքում տեղեկացնելու համար (գրավոր, բանավոր կամ էլեկտրոնային եղանակով):